

# ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## Դավիթ Ներսիկի Հախվերդյան

ՀՊՏՀ Միջազգային տնտեսական հարաբերությունների  
ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից համաշխարհային տնտեսությունում միջպետական համագործակցության կարևորագույն ձևերից մեկն ինտեգրացիոն գործընթացներն են: Պատմականորեն ձևավորվել է, որ պետությունների միջև հարաբերությունները մշտապես որոշվում էին ռազմատնտեսական ներուժով, այսպես կոչված, ուժերի հաշվեկշռով: Հենց հիմա էլ ուժերի հաշվեկշիռն ունի առաջնային նշանակություն<sup>1</sup>:

Միջազգային տնտեսական ինտեգրումը պահանջում է ինտեգրվող երկրներում վարվող տնտեսական քաղաքականության, այդ թվում՝ հարկային քաղաքականության մերձեցում: Ակնհայտ է, որ հարկային կարգավորման ներդաշնակեցումն ու նույնականացումը ցանկացած տնտեսական միության զարգացման կարևորագույն ուղղություններից են: Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) շրջանակներում հարկային համակարգերի ներդաշնակեցումը ենթադրում է հարկային հարաբերությունների իրավական կարգավորման ազգային համակարգերի մերձեցում, նրանց միջև տարբերությունների նվազեցում, իսկ հետագայում՝ այդ տարբերությունների իսպառ վերացում<sup>2</sup>:

Առհասարակ, առանձնացվում են հարկային քաղաքականության երեք տիպ.

1. Առավելագույն հարկերի քաղաքականություն. հարկերի սահմանում բարձր մակարդակով: Սակայն մեծ է հավանականությունը, որ հարկերի բարձրացումը երկարաժամկետ հեռանկարում կբերի տնտեսվարող սուբյեկտների գործունեության մոտիվացման նվազմանը և պետական եկամուտների սպասվելիք հավելաճը չի ապահովի:
2. Օպտիմալ հարկերի քաղաքականություն. նպաստում է

<sup>1</sup> **Егоров С.А.** Международное право: учебник/ С.А. Егоров. - 5-е изд., перераб. и доп.- М.: Статут, 2014, с.1087.

<sup>2</sup> **Мамаева А.А.** К вопросу унификации налогообложения в Евразийском экономическом союзе; Теория и практика современной юридической науки // Сборник научных трудов по итогам международной научно-практической конференции, Самара, 2017, № 4, с. 104, <http://izron.ru/articles/teoriya-i-praktika-sovremennoy-yuridicheskoy-nauki-sbornik-nauchnykh-trudov-po-itogam-mezhdunarodnoy-sektsiya-10-administrativnoe-pravo-finansovoe-pravo-informatsionnoe-pravo/k-voprosu-unifikatsii-nalogooblozheniya-v-evraziyskom-ekonomicheskoy-soyuze/> .

ձեռնարկատիրության զարգացմանը, ապահովելով բարենպաստ հարկային միջավայր, սակայն, ցավոք սրտի, տանում է սոցիալական ծրագրերի սահմանափակմանը, քանի որ պետական եկամուտները նվազում են:

3. Հարկման բարձր դրույքաչափերի քաղաքականություն՝ զգալի պետական սոցիալական պաշտպանության առկայությամբ (շվեդական մոդել):

Արդյունավետ տնտեսության դեպքում հարկային քաղաքականության վերոնշյալ երեք տիպերը, որպես կանոն, հաջողությամբ համակցվում են: Ցանկացած պետության գերակա նպատակներից մեկը հաշվեկշռված բյուջեն է: ԵԱՏՄ երկրները անցումային տնտեսությամբ երկրներ են, որոնցում 70 տարիների ընթացքում առկա է եղել տնտեսության կառուցման պլանային սկզբունքը: Ներկայումս շատ կարևոր է ընդհանուր տնտեսական տարածքի երկրներում հարկային քաղաքականության հիմնական սկզբունքների կառուցման ժամանակ ընդհանուր հայտարարի գալը, որպեսզի ԵԱՏՄ անդամ-երկրների ներքին քաղաքականության վրա «դրսից» էական ազդեցություն չունենան և հենց վերոնշյալ երկրները հնարավորություն ունենան էական ազդեցություն ունենալ համաշխարհային տնտեսության վրա:

ԵԱՏՄ միասնական տարածքի համար առավել արդյունավետ կհամարվեր հարկային քաղաքականության համալիր տիպը՝ վերոնշյալ երեք տիպերի համակցության միջոցով: Սակայն հաշվի առնելով, որ ԵԱՏՄ երկրները երկարա-ժամկետ ժամանակահատվածում գոյատևել են պլանային տնտեսության պայմաններում՝ կոշտ վարչական կենտրոնով, ԵԱՏՄ համար հարկային քաղաքականության տիպի ընտրության համար առավել արդյունավետ ճանապարհը բարձր դրույքաչափերով քաղաքականությունն է, սակայն զգալի պետական սոցիալական աջակցությամբ: Ընդ որում, անհրաժեշտ է հիշել նաև բարենպաստ ներդրումային միջավայրի մասին<sup>1</sup>:

## ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՈՒՄ

Հարկային ներդաշնակեցման դերը համաշխարհային գրականության մեջ գնահատվում է երկակի. մի կողմից, որպես օրինաչափ երևույթ, որը պայմանավորված է գլոբալացման և ինտեգրման ուժգնացմամբ և հարկային

<sup>1</sup> Казакова А.Г. Налоговая политика государств при интеграции стран-участниц в Евразийский экономический союз // Вестник государственного университета управления, М., № 1, 2015, с. 191.

մրցակցության վերացմամբ<sup>1, 2, 3</sup>, մյուս կողմից, որպես գործընթաց, որը զսպում է հարկային մրցակցությունը և չի ապահովում դրական արդյունքներ<sup>4</sup>: Ընդունված է, որ վերջին մոտեցումն իրավաչափ չէ միասնական շուկայի պայմաններում, քանի որ միայն հարկային համակարգերի բոլոր սուբյեկտների շահերն առավելագույն հաշվի առնելը կարող է ապահովել ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժը և որպես հետևանք՝ ինտեգրման գործընթացներին զուգընթաց հարկային օրենսդրությունը պետք է միայն զարգանա<sup>5</sup>:

Եվրամիության (ԵՄ) երկրները, որոնք հարկային ներդաշնակեցում են իրականացնում արդեն իսկ մի քանի տասնամյակների ընթացքում (սկսելով անուղղակի հարկերից, անցում կատարեցին ուղղակի հարկերին), միայն վերջին մի քանի տարում ամրագրեցին հարկման մեխանիզմների միասնականացման անհրաժեշտությունը<sup>6</sup>: Հարկային օրենսդրության ներդաշնակեցման ոլորտում ԵՄ փորձը ցույց է տալիս, որ, առաջին հերթին, անհրաժեշտ է կարգավորել հարաբերությունները անուղղակի հարկման ոլորտում: Դա բացատրվում է երկրների միջև փոխադարձ առևտրում գնազոյացման մեջ տվյալ հարկերի զգալի դերով, ինչպես նաև անդամ-երկրների բյուջետային եկամուտներում դրանց տեսակարար կշռով: ԵԱՏՄ երկրներում 2017 թվականին ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) բաժինը բյուջետային եկամուտներում կազմել է 17.1%-ից (Ղազախստան) մինչև 34.0% (Ռուսաստան)<sup>7</sup>:

ԵՄ շրջանակներում հատկապես ներկա ժամանակահատվածում տնտեսական ինտեգրման կարևորագույն օղակ դարձավ անդամ-երկրների հարկային համակարգերի մերձեցումը:

- 
- <sup>1</sup> **Подколзина И.А.** Тенденции развития европейской модели кредитно-денежной и бюджетной политики // Общество и экономика, М., 2000, № 3, сс. 139-141.
  - <sup>2</sup> **Mitchell D.** The Economics of Tax Competition: Harmonization vs. Liberalization, p. 26; URL: [http://www.bfsb-bahamas.com/photos/old\\_images/Tax%20Competition.Mitchell.pdf](http://www.bfsb-bahamas.com/photos/old_images/Tax%20Competition.Mitchell.pdf).
  - <sup>3</sup> **Wilson J.D. and Wildasin D.E.** Capital tax competition: bane or boon? p. 8; URL: <http://davidwildasin.us/pub/Wilson-Wildasin.pdf>.
  - <sup>4</sup> **Ипханов А.В.** Межстрановая налоговая гармонизация как стабилизирующий фактор развития мировой экономики: дисс. ... канд. экон. наук, Краснодар, 2000, с. 107.
  - <sup>5</sup> **Голодова Ж.Г., Ранчинская Ю.С.** Налогообложение доходов физических лиц в странах ЕАЭС: анализ параметров и направления гармонизации // Вестник РУДН, серия: Экономика, М., 2015, № 4, с. 79.
  - <sup>6</sup> **Каграманян А.Д.** Процесс гармонизации налогообложения в странах ЕС на современном этапе: дисс. ... канд. экон. наук, М., 2000, с. 107.
  - <sup>7</sup> Евразийский экономический союз в цифрах: краткий статистический сборник; Евразийская экономическая комиссия, М., 2018, сс. 174-175.

ԵՄ-ն իր առջև դրել է հետևյալ նպատակները.

- հարկային սահմանների վերացում, որպեսզի տնտեսվարող սուբյեկտների համար ստեղծվեն հավասար մրցակցային պայմաններ,
- ԵՄ ներքին շուկայի՝ որպես տարածաշրջանի ինտեգրացիոն գործընթացների հիմնական շարժիչի, միավորում և նույնականացում,
- երկրների հարկային համակարգերի, հիմնական հարկատեսակների հարկման մեխանիզմների նույնականացում<sup>1</sup>:

ԵՄՏՄ երկրները դեռևս գտնվում են ներդաշնակեցման նախնական փուլում (հարկային քաղաքականության համաձայնեցում, հիմնական հարկերի դրույքաչափերի մերձեցում), այդ պատճառով պահանջվում է վերլուծել ԵՄՏՄ օրենսդրություններում հարկային բազաների ձևավորման և հարկերի մասհանման առկա մոտեցումները և մեխանիզմները<sup>2</sup>:

ԵՄՏՄ շրջանակներում համաձայնեցված հարկային քաղաքականության հիմնական նպատակներն են.

- հարկային օրենսդրության ներդաշնակեցումը,
- ԵՄՏՄ երկրների հարկային համակարգերի համաձայնեցված բարեփոխումները,
- ԵՄՏՄ պետությունների միջև տնտեսական կապերի զարգացման վրա ազդող հարկային գործոնների վերացումը և այլն<sup>3</sup>:

Հարկային համակարգի ներդաշնակեցումն իրենից ներկայացնում է ԵՄՏՄ երկրների կողմից ինտեգրացիոն զարգացման համապատասխան փուլում իրավահարաբերությունների համընդհանուր տեսլականի մշակումը: Դրա հետ մեկտեղ, հարկային ներդաշնակեցումը պետք է նախատեսի իրավական կարգավորման որոշակի առանձնահատկություններ և նպատակ չդնի բոլոր տեսակի հարկերի և վճարների լրիվ ստանդարտացում ԵՄՏՄ-ում<sup>4</sup>:

Հարկային ներդաշնակեցումը պետք է սկսել հարկային վարչարարությունից և վերահսկողությունից<sup>5</sup>: Հարկային վարչարարության անհատական և հատուկ

<sup>1</sup> Тютюрюков Н. Н. Налоговые системы зарубежных стран. Европа и США, М.: Дашков и К., 2002, с.174.

<sup>2</sup> Голодова Ж.Г., Ранчинская Ю.С. Налогообложение доходов физических лиц в странах ЕАЭС: анализ параметров и направления гармонизации // Вестник РУДН, серия: Экономика, М., 2015, № 4, с. 80.

<sup>3</sup> Мамбеталиев Н., Мамбеталиева А. Налоги в Таможенном союзе и едином экономическом пространстве // Налоговый вестник, М., 2011, № 11, сс. 51–59.

<sup>4</sup> Коротина В.Л., Жверанцева М.С., Каримова Э.Р. Развитие процессов евразийской интеграции под воздействием налоговых механизмов // Известия Саратовского ун-та. Нов. сер. Сер. Экономика. Управление. Право, Саратов, 2013, Т. 13, вып. 3(1), с. 295.

<sup>5</sup> Алисенов А. С. Налоговое стимулирование инноваций в экономике России. Монография, М.: Проспект, 2017, с. 128.

միջոցները ԵՄՏՄ յուրաքանչյուր ինտեգրվող երկրում պետք է նույնականացվեն: ԵՄՏՄ շրջանակներում հարկային քաղաքականության ձևավորումը հեռանկարում պետք է նպաստի կապիտալի, ֆինանսական ռեսուրսների, ապրանքների, ծառայությունների և աշխատուժի ազատ տեղաշարժի խոչընդոտների վերացմանը: Հարկային օրենսդրության նույնականացմանն ուղղված ինտեգրացիոն գործընթացները դանդաղում են ԵՄՏՄ երկրների միջև գոյություն ունեցող հարկերի դրույքաչափերի ներդաշնակեցման, շուկայի նույնականացման և ապրանքների արտադրության հետ կապված նորմերի և ստանդարտների ներդաշնակեցման շուրջ առկա հակասությունների պատճառով: Արդյունքում, խոչընդոտներ են առաջանում համատեղ արդյունաբերական և հարկային քաղաքականության մշակման համար, որը հնարավորություն կտա մերձեցնել ԵՄՏՄ երկրների տնտեսությունները և ապահովել դրանց արդյունավետ փոխգործակցությունը: Այս խնդիրների լուծման համար անհրաժեշտ է հարկային ներդաշնակեցման հարցերում վերազգային կոորդինացում և փոխգործակցություն: Ներդաշնակեցման սկզբնական փուլում իրականացվում է անուղղակի հարկերի, այնուհետ՝ ուղղակի հարկերի նույնականացում<sup>1</sup>: Ընդ որում, նույնականացում ասելով հասկանում ենք ոչ թե միասնական դրույքաչափերի, հարկման ընթացակարգերի և կանոնների սահմանում, այլև հարկման և հարկային վարչարարության մոտեցումների մերձեցում այն աստիճան, որը հնարավոր է առանց որևէ երկրի ազգային շահերին վնաս պատճառելու<sup>2</sup>:

Ավելացված արժեքի հարկը կարևորագույն անուղղակի հարկն է, որը հարկվում է համարյա բոլոր ապրանքների և ծառայությունների շրջանառությունից (այդ թվում՝ անդրսահմանային համատեքստում): Ընդհակառակը, ուղղակի հարկերի ներդաշնակեցման և միասնական իրավական ռեժիմի ձևավորումը ձեռք է բերում հատուկ արդիականություն միայն տնտեսությունների բարձր ինտեգրման պայմաններում, երբ անդամ-երկրների փոխադարձ ուղղակի ներդրումները համարվում են տնտեսական զարգացման գերակշռող գործոնը: Այս պայմաններում ԵՄՏՄ մասին համաձայնագիրը նոր փուլ դարձավ եվրասիական ինտեգրման համար, որի նպատակը ներքին շուկայի ձևավորումն էր<sup>3</sup>:

<sup>1</sup> **Кнобель А. Ю.** Евразийский экономический союз: перспективы развития и возможные препятствия // Вопросы экономики, М., 2015, № 3, с. 89.

<sup>2</sup> **Алисенов А.С.** Перспективы налоговой интеграции государств - членов Евразийского экономического союза // Финансовый журнал / Financial Journal, М., № 5, 2017, с. 116.

<sup>3</sup> **Пономарева К.А.** Направления гармонизации налогообложения прибыли и доходов в Евразийском экономическом союзе // Вестник Омского университета. Серия «Право», Омск, 2017, № 3 (52), сс. 47–48.

ԱԱՀ-ի մասհանումն ըստ նշանակման երկրի սկզբունքի, մեր կարծիքով, տնտեսական տեսանկյունից առավել նախընտրելի է: Հարկման այդ համակարգն, ի տարբերություն ծագման երկրի սկզբունքի, չի պահանջում ԱԱՀ-ի դրույքաչափերի նույնականացում: ԵԱՏՄ շրջանակներում ԱԱՀ-ի դրույքաչափերի միասնականացումն այդ երկրների տնտեսությունների կառուցվածքների տարբերությունների պատճառով հնարավոր չէ: Բացի դրանից, ինչպես հայտնի է, ԵԱՏՄ մասին պայմանագրին համապատասխան՝ անուղղակի հարկերը համարվում են յուրաքանչյուր անդամ-երկրի հարկային ինքնավարության բաղկացուցիչ մասը: Այսպես, օրինակ, Բելառուսի համար ԱԱՀ-ն ոչ միայն բյուջետային եկամուտների զգալի աղբյուր է (շուրջ 33%), այլև տնտեսության կարգավորման հարկային գործիք: Այդ պատճառով ներկայումս գործող բյուջետային եկամուտների կառուցվածքում և ընթացիկ բյուջետային պարտավորությունների կառուցվածքում ԱԱՀ-ի դրույքաչափերի իջեցումը դիտարկվում է որպես անարդյունավետ և խնդրահարույց: ՌԴ-ի և Ղազախստանի համար նույնպես ԱԱՀ-ն համարվում է եկամուտների կարևոր աղբյուր, սակայն այն կարող է փոխհատուցվել հումքային ապրանքների արտահանման եկամուտներով և արտահանման մաքսատուրքերով: Հարկ է նաև նշել ԵԱՏՄ երկրներում ԱԱՀ-ի հիմնական դրույքաչափերի էական տարբերությունները. ՌԴ-ում այն կազմում է 18%, Բելառուսում և Հայաստանում՝ 20%, Ղազախստանում և Ղրղզստանում՝ 12%<sup>1</sup> (տես աղյուսակ 1):

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Հաշվի առնելով վերոշարադրյալը, հարկային ներդաշնակեցմանն ուղղված քաղաքականությունը՝ պետք է ենթադրի.

- ԱԱՀ-ի գծով արտոնությունների (ըստ սուբյեկտի, օբյեկտի և հարկային դրույքաչափերի) գծով միասնական բազային չափանիշների սահմանում,
- ԱԱՀ-ով հարկման օբյեկտներ չհամարվող գործառնությունների հիմնական խմբի, ինչպես նաև ԱԱՀ-ից ազատված գործառնությունների խմբի հստակ սահմանում,

---

<sup>1</sup> Алисенов А.С. Перспективы налоговой интеграции государств - членов Евразийского экономического союза // Финансовый журнал / Financial Journal, М., № 5, 2017, с. 116.

ԱԱՀ-ի դրույքաչափերը ԵԱՏՄ երկրներում <sup>1</sup>

| Երկիրը    | Ընդհանուր դրույքաչափը (%) | Հարկման բազան նվազեցված դրույքաչափի կիրառման համար   | Նվազեցված դրույքաչափ (%) | Չհարկվող շեմ (ԱՄՆ դոլար) |
|-----------|---------------------------|--|--------------------------|--------------------------|
| Ռուսաստան | 18                        | Մանկական ապրանքների, ինչպես նաև պարբերական հրատարակությունների և գրքերի, բժշկական ապրանքների իրացում:                                  | 10                       | -                        |
|           |                           | Ապրանքների և ծառայությունների արտահանում, ինչպես նաև ազատ մաքսային գոտու ռեժիմի ներքո իրացվող ապրանքներ, միջազգային բեռնափոխադրումներ: | 0                        | -                        |
| Ղազախստան | 12                        | Ապրանքների և ծառայությունների արտահանում, միջազգային բեռնափոխադրումներ և այլն:   | 0                        | -                        |
| Բելառուս  | 20                        | Բելառուսում արտադրված բուսաբուծական, անասնաբուծական, ձկնաբուծական և թռչնաբուծական արտադրանքի իրացում:                                  | 10                       | -                        |
|           |                           | Կարգավորվող մանրածախ գներով (ներառյալ ԱԱՀ-ն) ապրանքների վաճառք:  | 9.09 և 16.67             | -                        |
|           |                           | Ալմաստի և այլ թանկարժեք քարերի ներմուծում ԵԱՏՄ երկրներից՝ արդյունաբերական կարիքների համար:   | 0.50                     | -                        |
|           |                           | Ապրանքների և ծառայությունների արտահանում:  | 0                        | -                        |
| Հայաստան  | 20                        | Ապրանքների և ծառայությունների արտահանում, միջազգային բեռնափոխադրումներ և այլն:   | 0                        | 140534.7                 |

<sup>1</sup>Егине Петросян Пути гармонизации систем налогообложения в странах евразийского экономического союза // Экономическая политика, М., 2016, Т. 11, № 6, с. 230.

|          |    |  |   |         |
|----------|----|--|---|---------|
| Ղրղզստան | 12 | Ապրանքների և ծառայությունների արտահանում և այլն: | 0 | 74539.3 |
|----------|----|--|---|---------|

- ԱԱՀ-ի գծով իջեցված հարկային դրույքաչափերի սահմանման և կիրառման հիմնական չափանիշների սահմանում՝ հաշվի առնելով տվյալ երկրների ներպետական առանձնահատկությունները:
- Անհրաժեշտ է մշակել ապրանքների (ծառայությունների) ներմուծման անուղղակի հարկման և վարչարարության միասնական համակարգ: Այդ նպատակով անհրաժեշտ է մշակել մաքսային և հարկային մարմինների միջև տեղեկատվության փոխանակության և փոխանցման միասնական համակարգ<sup>1</sup>:

ԵՄՏՄ շրջանակներում հարկման նույնականացման խնդիրների լուծման համար անհրաժեշտ է վերազգային մակարդակով ամրագրել, առաջին հերթին, անուղղակի հարկերը կարգավորող հիմնական նորմերի և սկզբունքների նույնականացումը, բայց ոչ թե երկկողմ համաձայնագրերով կամ կոնվենցիաներով, այլ ԵՄՏՄ միասնական միջազգային փաստաթղթով, ընդ որում՝ ըստ առանձին հարկատեսակների պետք է լինեն առանձին համաձայնագրեր<sup>2</sup>:

Անուղղակի հարկերի դրույքաչափերի նույնականացումը թույլ կտա ստեղծել բարենպաստ պայմաններ միասնական տնտեսական տարածքի ձևավորման համար, որի շրջանակներում անդամ-երկրներն ի վիճակի կլինեն ստեղծել հավասար պայմաններ ապրանքների (ծառայությունների) տեղաշարժի համար՝ հիմնված անուղղակի հարկերի հարկման միասնական սկզբունքների վրա<sup>3</sup>:

Վերը նշվածին զուգահեռ, չպետք է մոռանալ, որ անուղղակի հարկերի միասնականացման ժամանակ, առաջին հերթին, անհրաժեշտ է մերձեցնել մաքսային ընթացակարգերն ու մաքսատուրքերը, այնուհետ՝ ենթակցիզային ապրանքների կազմն ու կառուցվածքը: Ընդ որում, ենթակցիզային ապրանքների հարկման միասնականացումը չի ենթադրում միասնական դրույքաչափերի սահմանում, այլ հարկման կազմի և ընդհանուր հարկման

<sup>1</sup> **Каримова Э.Р., Жверанцева М.С., Голубниченко М.В.** К вопросу о гармонизации систем косвенного налогообложения в Евразийском экономическом сообществе // Известия Саратовского ун-та. Нов. сер. Сер. Экономика. Управление. Право, Саратов, 2013, Т. 13, вып. 4(1), с. 530.

<sup>2</sup> **Мамаева А.А.** К вопросу унификации налогообложения в Евразийском экономическом союзе; Теория и практика современной юридической науки // Сборник научных трудов по итогам международной научно-практической конференции, Самара, 2017, № 4, с. 109.

<sup>3</sup> **Набирушкина И. С.** К вопросу об унификации ставок косвенных налогов в условиях функционирования ЕАЭС / И. С. Набирушкина // Налоги, 2015, № 2, сс. 26-27.



մակարդակի մերձեցում<sup>1</sup>: Ակցիզային հարկերի դրույքաչափերը սահմանվում են կոնկրետ երկրների կողմից՝ էլնելով տվյալ երկրի միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացման հեռանկարներից: Սակայն ենթաակցիզային հարկերի դրույքաչափերի չափազանց մեծ տարբերությունները կարող են հանգեցնել մրցակցային միջավայրի խաթարմանը: Այդ պատճառով ենթաակցիզային ապրանքների հարկման մակարդակներում խորը խզումներ թույլ չտալու նպատակով հարկ է իրականացնել համաձայնեցված պետական քաղաքականություն<sup>2</sup>:

Այն երկրներում, որտեղ ակցիզների դրույքաչափերը բարձր կլինեն, սեփական արտադրանքի իրացման շուկաների կորստի ռիսկեր են առաջանում<sup>3</sup>:

Կարճաժամկետ հեռանկարում ենթաակցիզային անուղղակի հարկման և մաքսային կարգավորման միասնականացումը կապահովի երեք հիմնական էֆեկտ.

- տնտեսության եկամուտների աճ վերջնական սպառման ապրանքների գների նվազման, ինչպես նաև հայրենական արդյունաբերության մեջ օգտագործվող ապրանքների գների նվազման հաշվին,
- հայրենական արտադրանքի նկատմամբ պահանջարկի նվազման որոշակի փոխհատուցում բնակչության եկամուտների աճի հաշվին,
- երրորդ երկրներում արտադրվող ապրանքների ապառումից անցում ԵԱՏՄ երկրներում արտադրվող ապրանքների սպառման<sup>4</sup>:

Ակնհայտ է, որ ակցիզային հարկի դրույքաչափերի զգալի տարբերությունները կարող են հանգեցնել բացասական հետևանքների: Եթե տվյալ երկրի ակցիզային հարկերի դրույքաչափերը գերազանցում են հարևան երկրի համանման ցուցանիշներին, ի հայտ է գալիս մաքսանենգության խնդիրը: Ակցիզային հարկի ներդաշնակեցման քաղաքականությունը պետք է իրականացնել երկկողմանի փոխադարձ հիմքով: Ակցիզային հարկի դրույքաչափերի սահմանման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ԵԱՏՄ անդամ-երկրների 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն, տնօրինվող օրական եկամուտները, ակցիզային հարկի տեսակարար կշիռը ապրանքի գնի մեջ, ենթաակցիզային ապրանքների վրա բնակչության կատարած ծախսերի տեսակարար կշիռը, այլ

<sup>1</sup> **Мурзагалиев Е. Ч.** Налоговое законодательство стран - членов Евразийского экономического союза: проблемы конкурентоспособности и унификации // Актуальные проблемы гуманитарных наук, 2015, № 2; URL: <http://publikacia.net/archive/2015/8/2/16>.

<sup>2</sup> **Мамбеталиев Н. Т.** Налоги и налогообложение в Евразийском экономическом союзе // Налоговая политика и практика, М., 2015, № 1 (145), с. 80.

<sup>3</sup> **Алисенов А.С.** Перспективы налоговой интеграции государств - членов Евразийского экономического союза // Финансовый журнал / Financial Journal, М., № 5, 2017, сс. 116-117.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 119:

սոցիալ-տնտեսական ցուցանիշներ, ինչպես նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության և միջազգային փորձագետների մոտեցումները<sup>1</sup>:

Դրա հետ մեկտեղ, ակցիզային հարկման նույնականացումը չի ենթադրում ենթակցիզային ապրանքների միասնական հարկային դրույքաչափերի սահմանում, այն պահանջում է ընդամենը ենթակցիզային ապրանքների ցանկի և հարկման ընդհանուր մակարդակի մերձեցում:

ԵԱՏՄ երկրներում ենթակցիզային ապրանքների հարկային դրույքաչափերի ուսումնասիրությունը ցույց է տալիս դրանց մակարդակների աննշան տարբերությունները, բացառությամբ որոշ ապրանքների: Դրույքաչափերի կեսից ավելիի դեպքում դրանք ներդաշնակեցված են (ենթակցիզային ապրանքների ընդհանուր ցանկի շուրջ 60%-ը), այսինքն ունեն բավականին մոտ չափեր<sup>2</sup>: Բացառություն են կազմում ավտոբենզինը, դիզելային վառելիքն ու սիգարետները, որոնց դեպքում ԵԱՏՄ որոշ երկրներում դրանց դրույքաչափերը կրկնակի անգամ բարձր են մյուս երկրների համանման ցուցանիշներից<sup>3</sup>:

Ակցիզային հարկման կատարելագործման գծով առաջարկվում է.

- ակցիզային հարկերի դրույքաչափերի ներդաշնակեցում (միջերկրային հարկային մրցակցությունը բացառելու, ինչպես նաև մերձսահմանային վայրերում չկազմակերպված անդրսահմանային առևտուրը բացառելու նպատակով),
- ակցիզային հարկի վճարման վարչարարության ներդաշնակեցում,
- հարկային և մաքսային մարմինների միջև տեղեկատվության փոխանակման կատարելագործում,
- ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների, արտադրողների (արտահանողների և ներմուծողների) միասնական բազայի ստեղծում,
- հեռանկարում անցում ակցիզային հարկի միասնական դրույքաչափերի:

<sup>1</sup> **Коротина В.Л., Жверанцева М.С., Каримова Э.Р.** Развитие процессов евразийской интеграции под воздействием налоговых механизмов // Известия Саратовского ун-та. Нов. сер. Сер. Экономика. Управление. Право, Саратов, 2013, Т. 13, вып. 3(1), сс. 296-297.

<sup>2</sup> Анализ действующих систем регулирования агропродовольственного рынка в государствах - членах ЕАЭС в части налогообложения, кредитования, страхования, ценового регулирования и разрешительной системы. Москва. Евразийская экономическая комиссия, 2015, с. 8.

<sup>3</sup> **Егине Петросян** Пути гармонизации систем налогообложения в странах евразийского экономического союза // Экономическая политика, М., 2016, Т. 11, № 6, с. 232.

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿԵՑՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դավիթ Ներսիկի Հախվերդյան  
ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր

**Համառոտագիր**

Հարկային կարգավորման ներդաշնակեցումն ու նույնականացումը ցանկացած տնտեսական միության զարգացման կարևորագույն ուղղություններից են: Հարկային համակարգի ներդաշնակեցումն իրենից ներկայացնում է Եվրասիական տնտեսական միության երկրների կողմից ինտեգրացիոն զարգացման համապատասխան փուլում իրավահարաբերությունների համընդհանուր տեսլականի մշակումը: Անուղղակի հարկերի ներդաշնակեցումը թույլ կտա ստեղծել բարենպաստ պայմաններ միասնական տնտեսական տարածքի ձևավորման համար, որի շրջանակներում անդամ-երկրներն ի վիճակի կլինեն ստեղծել հավասար պայմաններ ապրանքների (ծառայությունների) տեղաշարժի համար:

**Հիմնաբառեր.** Եվրասիական տնտեսական միություն, հարկային համակարգերի ներդաշնակեցում, ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ:

О НЕКОТОРЫХ ЗАДАЧАХ ГАРМОНИЗАЦИИ НАЛОГОВЫХ СИСТЕМ СТРАН  
ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА

Давид Нерсикович Ахвердян

Профессор кафедры Международных  
экономических отношений АГЭУ, д.э.н.

**Аннотация**

Гармонизация и унификация налогового регулирования - важные направления развития любого экономического союза. Гармонизация налогового законодательства представляет собой разработку общего курса государств-членов Евразийского экономического сообщества в сфере налоговых правоотношений на соответствующем этапе интеграционного взаимодействия. Гармонизация косвенных налогов позволит создать наиболее комфортные условия для формирования единого экономического пространства, в рамках которого государства-члены смогут создать общие равные условия для перемещения товаров (услуг).

**Ключевые слова.** Евразийский экономический союз, гармонизация налоговых систем, налог на добавленную стоимость, акцизный налог.

## SOME PROBLEMS OF TAX SYSTEMS HARMONIZATION IN THE EURASIAN ECONOMIC UNION COUNTRIES

**Davit Nersik Hakhverdyan**

Professor at the Chair of International Economic Relations at ASUE,  
Doctor of Sciences (Economics)

### **Abstract**

Harmonization and unification of tax regulation are important directions for the development of any economic union. Harmonization of the tax system is the development of the common vision in the field of tax legal relations for the Eurasian Economic Union member states at the appropriate stage of integration interaction. Harmonization of indirect taxes will create the most comfortable conditions for the formation of a single economic space within which member states can create equal conditions for the movement of goods (services).

**Keywords:** Eurasian Economic Union, taxation system harmonization, value added tax, excise tax.